# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» նոյեմբերի 2024 թվականի N 120-Ա

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Ասրյան Վարսիկ | | |
| Հակոբյան Արծրուն | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Հակոբյան Վանո | | |
| Մարտիրոսյան Մարտուն | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Տոնոյան Անդրանիկ | | |
| Գագինյան Ատոմ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

29.11.2024թ.

ք. Ստեփանավան

1. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Է. ՌԵՎԱԶՅԱՆ**

3. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՆՈՐ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

4. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Գ. ՊԱՊՅԱՆ**

5. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ -Ի ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

6. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՐՈՇԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՄՈՒՇԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Գ. ՇԻՐՄԱԶԱՆՅԱՆ**

7. «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՊԱՏՎՈ ՆՇԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՄՈՒՇԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Գ. ՇԻՐՄԱԶԱՆՅԱՆ**

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Գ. ՇԻՐՄԱԶԱՆՅԱՆ**

9. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՈՒՐԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՍՏԵՓՋՈՐ-1» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ «ՋՔՆԱՂ-1» ՓՀԷԿ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Ա. ԱՎԱԳՅԱՆ**

10. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ԶԵԿՈՒՑՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի հեռախոս՝ (0256) 2-22-33,
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2024 թվականի N 121-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 140-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2024 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի եկամուտներում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) եկամուտները պակասեցնել 307844.602 հազ. դրամով, սահմանել 1309421.298 հազ. դրամ:
2. Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից պակասեցնել 102310.0 հազ. դրամ, սահմանել 1539.0 հազ.դրամ
3. Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի իրականացման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից եկամուտները պակասեցնել 378596.31 հազ. դրամ, սահմանել 498731.6843 հազ.դրամ:
4. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը ավելացնել 25000.0 հազ. դրամով, սահմանել 178000.0 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսերում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 1 դաս 1)

. հոդված «4111 – աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» պակասեցնել 8000.0 հազ.դրամ, սահմանել 151553.6 հազ. դրամ,

. հոդված «4213 – կոմունալ ծառայություններ» ավելացնել 50.0 հազ. դրամով, սահմանել 657.3 հազ. դրամ,

. հոդված «4221 – ներքին գործուղումներ» պակասեցնել 400.0 հազ. դրամով, սահմանել 1100.0 հազ. դրամ,

. հոդված «4222 – արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր» պակասեցնել 1235.0 հազ. դրամով, սահմանել 1765.0 հազ. դրամ,

. հոդված «4232 – համակարգչային ծառայություններ» պակասեցնել 900.0 հազ. դրամով, սահմանել 2886.0 հազ. դրամ,

. հոդված «4233 – աշխատակազմի մասնագիտական զարգացում» պակասեցնել 2160.989 հազ. դրամով, սահմանել 139.011 հազ. դրամ,

հոդված «4235 – Կառավարչական ծառայություններ» ծախսային հոդվածը պակասեցնել 1000.0 հազ. դրամով, սահմանել 3000.0 հազ. դրամ:

հոդված «4237 – Ներկայացուցչական ծախսեր» ծախսային հոդվածը պակասեցնել 2000.0 հազ. դրամով, սահմանել 3000.0 հազ. դրամ:

. հոդված «4239 – Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» ավելացնել 800.0 հազ. դրամով, սահմանել 900.0 հազ. դրամ,

հոդված «4264 – Տրանսպորտային նյութեր» ծախսային հոդվածը պակասեցնել 800.0 հազ. դրամով, սահմանել 2314.0 հազ. դրամ:

. հոդված «5113 – շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» ծախսային հոդվածը պակասեցնել 865.0 հազ. դրամով, սահմանել 9135.0 հազ. դրամ,

. հոդված «5122 – վարչական սարքավորումներ» ծախսային հոդվածը ավելացնել 135.0 հազ. դրամով, սահմանել 3135.0 հազ. դրամ,

2. Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրի նախահաշվի (բաժին 1 խումբ 6 դաս 1)

. հոդված «4241 – -Մասնագիտական ծառայություններ» ծախսային հոդվածը պակասեցնել 2000.0 հազ. դրամով՝ սահմանել 4500.0 հազ.դրամ

. հոդված «4252 – մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» պակասեցնել 650.0 հազ. դրամով,

. հոդված «4823 – Պարտադիր վճարներ» ծախսային հոդվածը ավելացնել 600.0 հազ. դրամով, սահմանել 3600.0 հազ. դրամ,

. հոդված «5112 – Շենքերի և շինությունների շինարարություն» ծախսային հոդվածը պակասեցնել 2000.0 հազ.դրամով,

. հոդված «5121 – Տրանսպորտային սարքավորումներ» ծախսային հոդվածը պակասեցնել 171600.0 հազ.դրամով,

. հոդված «5134 – նախագծահետազոտական ծախսեր» ծախսային հոդվածը պակասեցնել 300.0 հազ. դրամով, սահմանել 4700.0 հազ. դրամ,

3. Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Գյուղատնտեսություն» ծրագրի նախահաշվի (բաժին 04 խումբ 2 դաս 1)

. հոդված «4729- Այլ նպաստներ բյուջեից» ծախսային հոդվածը պակասեցնել 216.311 հազ. դրամով, սահմանել 4683.689 հազ. դրամ,

4. Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Աղբահանում» ծրագրի նախահաշվի (բաժին 5 խումբ 1 դաս 1)

. հոդված «4637-ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» պակասեցնել 1500.0 հազ. դրամով, սահմանել 84858.9 հազ. դրամ

5. Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Շրջակա միջավայրի պաշտպանություն» ծրագրի նախահաշվի (բաժին 5 խումբ 6 դաս 1)

. հոդված «5131 – Աճեցվող ակտիվներ» ծախսային հոդվածը պակասեցնել 2000.0 հազ. դրամով և սահմանել 1000.0 հազ. դրամ:

Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Բնակարանային շինարարություն» ծրագրի նախահաշվի (բաժին 6 խումբ 1 դաս 1)

. հոդված «5113 – շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» ծախսային հոդվածը պակասեցնել 20000.0 հազ. դրամով, սահմանել 431551.576 հազ. դրամ,

7. Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Ջրամատակարարում» ծրագրի նախահաշվի (բաժին 6 խումբ 3 դաս 1) ծախսերը պակասեցնել 117095.532 հազ. դրամով, սահմանել 243783.468 հազ. դրամ,

8. Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» ծրագրի նախահաշվի (բաժին 8 խումբ 1 դաս 1)

. հոդված «4239 – Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ » ավելացնել 3000.0 հազ. դրամով, սահմանել 10000.0 հազ. դրամ,

. հոդված «5113 – շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» ծախսերը պակասեցնել 450000.0 հազ. դրամով, սահմանել 477396.4 հազ. դրամ:

9. Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Գրադարաններ» ծրագրի նախահաշվի (բաժին 8 խումբ 2 դաս 1)

. հոդված «4637-ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» պակասեցնել 2500.0 հազ. դրամով սահմանել 15239.4 հազ. դրամ

10. Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ» ծրագրի նախահաշվի (բաժին 8 խումբ 2 դաս 3)

. հոդված «4637-ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» պակասեցնել 1500.0 հազ. դրամով սահմանել 22410.76 հազ. դրամ

11. Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Հեռուստառադիոհաղորդումներ» ծրագրի նախահաշվի (բաժին 8 խումբ 3 դաս 1)

. հոդված «4234 – տեղեկատվական ծառայություններ» պակասեցնել 600.0 հազ. դրամով սահմանել 350.0 հազ. դրամ,

12. Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Տեղեկատվության ձեռք բերում» ծրագրի նախահաշվի (բաժին 08 խումբ 02 դաս 4)

. հոդված «4234 – տեղեկատվական ծառայություններ» ավելացնել 12.3 հազ. դրամով սահմանել 892.3 հազ. դրամ,

13. Ստեփանավան համայնքի 2023 թվականի բյուջեի «Նախադպրոցական կրթություն» ծրագրի նախահաշվի (բաժին 9 խումբ 1 դաս 1)

.հոդված «4637–ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» ծախսային հոդվածը պակասեցնել 1380.0 հազ. դրամով, սահմանել 165806.1 հազ. դրամ,

14. Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրի նախահաշվի (բաժին 9 խումբ 5 դաս 1)

. հոդված «4637–ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» ծախսային հոդվածը պակասեցնել 2620.0հազ. դրամով, սահմանել 82469.5 հազ. դրամ:

. հոդված «5113 – շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» ծախսային հոդվածը պակասեցնել 25.380 հազ. դրամ:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Համլետ | | |
| Խպլիրյան Անուշ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |

արյան Վարսիկ
Հակոբյան Արծրուն
Դավթյան Արմեն
Պապյան Արթուր
Հակոբյան Վանո
Մարտիրոսյան Մարտուն
Կիրակոսյան Ջոն
Տոնոյան Անդրանիկ
Գագինյան Ատոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«29» նոյեմբերի 2024 թվականի N 122-Ա

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Ասրյան Վարսիկ | | |
| Հակոբյան Արծրուն | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Հակոբյան Վանո | | |
| Մարտիրոսյան Մարտուն | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Տոնոյան Անդրանիկ | | |
| Գագինյան Ատոմ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Հավելված 1
Ստեփանավանի համայնքի ավագանու
29.11.2024 թ. թիվ 122-Ա որոշման

«Ստեփանավանի թիվ 1 մսուր - մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիք | Դրույք | Դրույքաչափ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | 1 | 1 | 200000 | 200000 |
| Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ | 1 | 0,5 | 160000 | 80000 |
| Դաստիարակ | 1 | 1 | 140000 | 140000 |
| Դաստիարակ | 1 | 1 | 140000 | 140000 |
| Դաստիարակ | 1 | 1 | 140000 | 140000 |
| Դաստիարակ | 1 | 1 | 140000 | 140000 |
| Դաստիարակ երաժիշտ | 1 | 1 | 130000 | 130000 |
| Դաստիարակ | 1 | 0,68 | 140000 | 95200 |
| ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 1 | 0,25 | 140000 | 35000 |
| Դաստ. օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Դաստ. օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Դաստ. օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Դաստ. օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Բուժքույր | 1 | 1 | 130000 | 130000 |
| Տնտեսվար | 1 | 0.5 | 125000 | 62500 |
| Խոհարար | 1 | 1 | 130000 | 130000 |
| Խոհարարի օգնական | 1 | 1 | 125000 | 125000 |
| Լվացարար /հավաքարար | 1 | 0.5/0.5 | 125000 | 125000 |
| Դռնապան | 1 | 1 | 125000 | 125000 |
| Ընդամենը | 19 | 16.93 | | 2317700 |

Հավելված 2
Ստեփանավան համայնքի ավագանու
29.11.2024 թ. թիվ 122-Ա որոշման

«Ստեփանավանի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային

| Հաստիքի անվանումը | Հաստիք | Դրույքը | Դրուքաչափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | 1 | 1 | 200000 | 200000 |
| Մեթոդիստ ուս. գծով տնօրենի | 3 | 0.25 | 160000 | 120000 |
| Դաստիարակ | 1 | 1,17 | 140000 | 163800 |
| Դաստիարակ | 1 | 1,17 | 140000 | 163800 |
| Դաստիարակ | 1 | 1,17 | 140000 | 163800 |
| ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 3 | 0,25 | 140000 | 105000 |
| Դաստիարակ երաժիշտ | 3 | 0,25 | 130000 | 97500 |
| Դաստիարակի օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Դաստիարակի օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Դաստիարակի օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Բուժքույր | 3 | 0,5 | 130000 | 195000 |
| Խոհարար | 3 | 0,5 | 130000 | 195000 |
| Տնտեսվար | 3 | 0,5 | 125000 | 187500 |
| Լվացարար /հավաքարար | 1 | 0.25/0.25 | 125000 | 62500 |
| Հավաքարար | 2 | 0,25 | 125000 | 62500 |
| Ընդամենը | 25 | 10,51 | | 2106400 |

Հավելված **3**
Ստեփանավան համայնքի ավագանու
**29.11.2024** թ. թիվ **122**-Ա որոշման

**«**Ստեփանավանի թիվ **3** մանկապարտեզ**»** համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիք | Դրույքը | Դրույքաչափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | 1 | 1 | 200000 | 200000 |
| Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ | 1 | 0.5 | 160000 | 80000 |
| Դաստիարակ | 1 | 1 | 140000 | 140000 |
| Դաստիարակ | 1 | 1 | 140000 | 140000 |
| Դաստիարակ | 1 | 1 | 140000 | 140000 |
| Դաստիարակ | 1 | 0,51 | 140000 | 71400 |
| ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 1 | 0,25 | 140000 | 35000 |
| Դաստիարակ երաժիշտ | 1 | 0.75 | 130000 | 97500 |
| Դաստիարակի օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Դաստիարակի օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Դաստիարակի օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Բուժքույր | 1 | 1 | 130000 | 130000 |
| Խոհարար | 1 | 1 | 130000 | 130000 |
| Խոհար. օգն./Տնտեսվար | 1 | 0.5/0.5 | 125000 | 125000 |
| Լվացարար/հավաքարար | 1 | 0.5/0.5 | 125000 | 125000 |
| Դռնապան | 1 | 1 | 125000 | 125000 |
| Ընդամենը | 16 | 14,01 | | 1928900 |

Հավելված 4
Ստեփանավան համայնքի ավագանու
**29.11.2024** թ. թիվ **122**-Ա որոշման

«Ստեփանավանի թիվ **4** մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիք | Դրույքը | Դրույքաչափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | **1** | **1** | **200000** | **200000** |
| Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ | **1** | **0,5** | **160000** | **80000** |
| Դաստիարակ | **1** | **1** | **140000** | **140000** |
| Դաստիարակ | **1** | **1** | **140000** | **140000** |
| Դաստիարակ | **1** | **1** | **140000** | **140000** |
| Դաստիարակ | **1** | **1** | **140000** | **140000** |
| Դաստիարակ | **1** | **0,68** | **140000** | **95200** |
| ֆիզկուլտուրայի հրահանգիչ | **1** | **0,25** | **140000** | **35000** |
| Դաստիարակ երաժիշտ | **1** | **1** | **130000** | **130000** |
| Դաստիարակի օգնակ. | **1** | **1** | **130000** | **130000** |
| Դաստիարակի օգնակ. | **1** | **1** | **130000** | **130000** |
| Դաստիարակի օգնակ. | **1** | **1** | **130000** | **130000** |
| Դաստիարակի օգնակ. | **1** | **1** | **130000** | **130000** |
| Բուժքույր | **1** | **1** | **130000** | **130000** |
| Խոհարար | **1** | **1** | **130000** | **130000** |
| Խոհարարի օգնական | **1** | **1** | **125000** | **125000** |
| Տնտեսվար | **1** | **0,5** | **125000** | **62500** |
| Դռնապան | **1** | **1** | **125000** | **125000** |
| Լվացարար/հավաքարար | **1** | **0.5/0.5** | **125000** | **125000** |
| Ընդամենը | **19** | **16,93** | | **2317700** |

Հավելված 5
Ստեփանավան համայնքի ավագանու
**29.11.2024** թ. թիվ **122**-Ա որոշման

**«Ստեփանավանի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 5 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության**
**հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը**

| Հաստիքի անվանումը | Հաստիք | Դրույքը | Դրուքաչափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | 1 | 1 | 200000 | 200000 |
| Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ | 1 | 0,75 | 160000 | 120000 |
| Դաստիարակ | 1 | 1 | 140000 | 140000 |
| Դաստիարակ | 1 | 1 | 140000 | 140000 |
| Դաստիարակ | 1 | 1 | 140000 | 140000 |
| Դաստիարակ | 1 | 1 | 140000 | 140000 |
| Դաստիարակ | 1 | 1 | 140000 | 140000 |
| ֆիզկուլտուրայի հրահանգիչ | 1 | 0,25 | 140000 | 35000 |
| Դաստիարակ | 1 | 0,85 | 140000 | 119000 |
| Դաստիարակ երաժիշտ | 1 | 1,25 | 130000 | 162500 |
| Դաստիարակի օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Դաստիարակի օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Դաստիարակի օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Դաստիարակի օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Դաստիարակի օգնակ. | 1 | 1 | 130000 | 130000 |
| Բուժքույր | 1 | 1 | 130000 | 130000 |
| Տնտեսվար | 1 | 0,75 | 125000 | 93750 |
| Խոհարար | 1 | 1 | 130000 | 130000 |
| Խոհարար օգնակ. | 1 | 1 | 125000 | 125000 |
| Լվացարար | 1 | 0,5 | 125000 | 62500 |
| Դռնապան | 1 | 1 | 125000 | 125000 |
| Հավաքարար | 1 | 0.5 | 125000 | 62500 |
| Ընդամենը | 22 | 19. 85 | | 2715250 |

Հավելված **6**
Ստեփանավան համայնքի ավագանու
**29.11.2024** թ. թիվ **122-**Ա որոշման

«Ստեփանավանի քաղաքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիք | Դրույքը | Դրույքաչափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | **1** | **1** | **200000** | **200000** |
| Համալրման և մշակման մասնագետ | **1** | **1** | **150000** | **150000** |
| Հասարակական կապերի և միջոցառումների կազմակերպման աշխատակից | **1** | **1** | **125000** | **125000** |
| Գրադարանավար | **3** | **3** | **130000** | **390000** |
| Գրադարանավար | **1** | **1** | **130000** | **130000** |
| Օպերատոր | **1** | **1** | **125000** | **125000** |
| Հավաքարար | **1** | **1** | **125000** | **125000** |
| Ընդամենը | **9** | **9** | | **1245000** |

Հավելված 7
Ստեփանավան համայնքի ավագանու
**29.11.2024** թ. թիվ **122**-Ա որոշման

«Ստեփանավանի Արթուր Ղարիբյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիք | Դրույքը | Դրույքաչափը | Ամսական աշխատավարձի ֆոնդը |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | **1** | **1** | **200000** | **200000** |
| Դասատու | **29** | **34** | **130000** | **4420000** |
| Գործավար, գրադարանավարուհի | **1** | **1** | **125000** | **125000** |
| Լաբորանտ | **1** | **0.5** | **125000** | **62500** |
| Հավաքարար | **2** | **2** | **125000** | **250000** |
| Ընդամենը | **34** | **38. 5** | | **5057500** |

Հավելված 8
Ստեփանավան համայնքի ավագանու
**29.11.2024** թ. թիվ **122**-Ա որոշման

**«**Ստեփանավանի Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատ**»** համայնքային ոչ առևտրային կազմակերպության
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիք | Դրույքը | Դրույքաչափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | **1** | **1** | **200000** | **200000** |
| Գեղարվեստական ղեկավար | **1** | **1** | **150000** | **150000** |
| Ասմունքի խմբավար | **1** | **1** | **130000** | **130000** |
| Կերպարվեստի խմբավար | **1** | **1** | **130000** | **130000** |
| Պարուսույց | **1** | **1** | **130000** | **130000** |
| Թատերագետ | **1** | **1** | **130000** | **130000** |
| Դիզայնի խմբավար | **1** | **1** | **130000** | **130000** |
| Դեկորատիվ կիրառական և արվեստի խմբավար | **1** | **1** | **130000** | **130000** |
| Երգեցողության խմբավար | **1** | **1** | **130000** | **130000** |
| Օպերատոր | **1** | **1** | **130000** | **130000** |
| Տնտեսվար | **1** | **1** | **140000** | **140000** |
| Հավաքարար | **1** | **1** | **125000** | **125000** |
| Հավաքարար | **1** | **1** | **125000** | **125000** |
| Ընդամենը | **13** | **13** | | **1780000** |

Հավելված **9**
Ստեփանավան համայնքի ավագանու
**29.11.22** թ. թիվ **122-**Ա որոշման

**«**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի մանկապատանեկան մարզադպրոց և ժամանցային կենտրոն**»** համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիք | Դրույքը | Դրույքաչափը | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Տնօրեն/Մարզիչ- մանկավարժ բարձրագույն կր | **1** | **1/0.5** | **200000/70000** | **270000** |
| Փոխ. տնօրենՄարզիչ- մանկավարժ բարձր. կր | **1** | **1/0,5** | **160000/70000** | **230000** |
| Փոխ. տնօրեն | **1** | **1** | **180000** | **180000** |
| Ինժեներ մեխանիկ | **1** | **1** | **160000** | **160000** |
| Էլեկտրիկ | **1** | **1** | **160000** | **160000** |
| Մարզիչ- մանկավարժ բարձրագույն կրթ. | **1** | **1** | **140000** | **140000** |
| Մարզիչ- մանկավարժ բարձրագույն կրթ. | **1** | **1** | **140000** | **140000** |
| Մարզիչ- մանկավարժ բարձրագույն կրթ. | **1** | **1** | **140000** | **140000** |
| Մարզիչ- մանկավարժ բարձրագույն կրթ. | **1** | **1** | **140000** | **140000** |
| Մարզիչ- մանկավարժ բարձրագույն կրթ. | **1** | **1** | **140000** | **140000** |
| Մարզիչ- մանկավարժ միջին մասն. | **1** | **1** | **140000** | **140000** |
| Մարզիչ- մանկավարժ միջին մասն. | **1** | **1** | **140000** | **140000** |
| Բժիշկ | **1** | **0,5** | **130000** | **65000** |
| Բուժքույր | **1** | **1** | **130000** | **130000** |
| Հավաքարար | **1** | **1** | **125000** | **125000** |
| Հավաքարար | **1** | **1** | **125000** | **125000** |
| Հավաքարար | **1** | **1** | **125000** | **125000** |
| Հսկիչ | **2** | **2** | **125000** | **250000** |
| Պահակ | **1** | **1** | **125000** | **125000** |
| Կառուսելավարներ | **6** | **6** | **125000** | **750000** |
| Դրամարկղի աշխատող | **2** | **2** | **125000** | **250000** |
| Ընդամենը | **28** | **28,5** | | **3925000** |

Հավելված 10
Ստեփանավան համայնքի ավագանու
29.11.2024 թ. թիվ 122-Ա որոշման

«Ստեփանավանի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| *Հաստիքի անվանումը* | *Հաստիքը* | *Դրույքը* | *Դրույքաչափը* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | 1 | 1 | 330000 | 330000 |
| Տնօրենի տեղակալ | 2 | 2 | 300000 | 600000 |
| գլխավոր հաշվապահ | 1 | 1 | 300000 | 300000 |
| Ինժեներ | 1 | 1 | 295000 | 295000 |
| Մեխանիկ | 1 | 1 | 280000 | 280000 |
| Կադրերի տեսուչ | 1 | 1 | 165000 | 165000 |
| Գերեզմանների հսկիչ | 1 | 1 | 175000 | 175000 |
| Ավագ վարպետ | 1 | 1 | 215000 | 215000 |
| Վարպետ մասնագետ | 5 | 5 | 170000 | 850000 |
| Էլեկտրիկ | 1 | 1 | 170000 | 170000 |
| Վարորդ | 8 | 8 | 190000 | 1520000 |
| Ավտոգրեյդերի վարորդ | 1 | 1 | 205000 | 205000 |
| Էքսկավատորի վարորդ | 1 | 1 | 205000 | 205000 |
| Բրիգադիր | 2 | 2 | 205000 | 410000 |
| Բանվոր | 17 | 17 | 182000 | 3094000 |
| Բանվոր սեզոնային | 3 | 3 | 180000 | 540000 |
| Ավլող-հավաքարար | 24 | 24 | 145000 | 3480000 |
| Հավաքարար | 1 | 1 | 96000 | 96000 |
| ***Ընդամենը*** | ***64*** | ***72*** | **3808000** | **12930000** |

Հավելված 11

Ստեփանավան համայնքի ավագանու
29.11.2024 թ. թիվ 122-Ա որոշման

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ»**

համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| *Հաստիքի անվանումը* | *Հաստիք* | *Դրույքը* | *Դրույքաչափը* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | **1** | **1** | **265000** | **265000** |
| Հաշվապահ | **3** | **3** | **180000** | **540000** |
| Գնումների համակարգող | **1** | **1** | **230000** | **230000** |
| Գնումների համակարգող | **2** | **2** | **210000** | **420000** |
| *Ընդամենը* | **8** | **8** | | **1455000** |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«29» նոյեմբերի 2024 թվականի N 123-Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամին համայնքի տարածքում անհատույց տրված գյուղատնտեսական նշանակության հողամասերի համար սահմանել արտոնություն՝ ազատել անշարժ գույքի հարկից:
2. Արտոնությունը տարածվում է 2023թ.-ից սկսած մինչև գույքի տնօրինման ավարտը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Ասրյան Վարսիկ | | |
| Հակոբյան Արծրուն | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Հակոբյան Վանո | | |
| Մարտիրոսյան Մարտուն | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Տոնոյան Անդրանիկ | | |
| Գագինյան Ատոմ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝** **ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» նոյեմբերի 2024 թվականի N 124-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 26-րդ կետերով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Անվանափոխել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ Ստեփանավան համայնքի «Մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ Ստեփանավան համայնքի Մանկապատանեկան մարզադպրոց և ժամանցային կենտրոն» անվանումով և հաստատել կանոնադրությունը նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ավագանու 13.12.2013 թվականի թիվ 47-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |

Պապյան Լևոն

Ասրյան Վարսիկ

Հակոբյան Արծրուն

Դավթյան Արմեն

Պապյան Արթուր

Հակոբյան Վանո

Մարտիրոսյան Մարտուն

Կիրակոսյան Ջոն

Տոնոյան Անդրանիկ

Գագինյան Ատոմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» նոյեմբերի 2024 թվականի N 125-Ա

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՐՈՇԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՄՈՒՇԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ ենթակետով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Ստեփանավան համայնքի դրոշի նկարագրությունը և նմուշը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Ասրյան Վարսիկ | | |
| Հակոբյան Արծրուն | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Հակոբյան Վանո | | |
| Մարտիրոսյան Մարտուն | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Տոնոյան Անդրանիկ | | |
| Գագինյան Ատոմ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի
Ստեփանավան համայնքի ավագանու
2024թ. նոյեմբերի 29-ի N
125-Ա որոշման

## Ստեփանավան քաղաքի դրոշի նկարագրությունը

Դրոշի կենտրոնում պատկերված է Ստեփանավանի զինանշանը, որի կանաչ գույները խորհրդանշում են կանաչ քաղաքի հույսը և առատությունը, դարչնագույնը խորհրդանշում է կայունություն և առատաձեռնություն: Արծիվը խորհրդանշում է ուժ և ազատություն: Դրոշի սպիտակ հիմնագույնը խորհրդանշում է մաքրություն, պարզություն և անաղարտություն:

Դրոշի լայնության և երկարության չափերի տարբերությունը 1:2-ի: Լայնության և երկարության հարաբերության չափերի պահպանմամբ կարող է օգտագործվել նաև փոքր կամ մեծ չափի դրոշ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2024 թվականի N 126-Ա

## «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՊԱՏՎՈ ՆՇԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՄՈՒՇԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ ենթակետով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել «Ստեփանավանի երախտագիտություն» պատվո նշանի նկարագրությունը և նմուշը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Ասրյան Վարսիկ | | |
| Հակոբյան Արծրուն | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Հակոբյան Վանո | | |
| Մարտիրոսյան Մարտուն | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Տոնոյան Անդրանիկ | | |
| Գագինյան Ատոմ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի
Ստեփանավան համայնքի ավագանու
2024թ. նոյեմբերի 29-ի N
126-Ա որոշման

«Ստեփանավանի երախտագիտություն»

Պատվո նշանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Սույն կանոնադրությամբ կարգավորվում է **«Ստեփանավանի երախտագիտություն»** Պատվո նշանով (այսուհետև՝ շքանշան) պարգևատրման կարգը:

2. Շքանշանով պարգևատրելու վերաբերյալ միջնորդությամբ Ստեփանավանի ավագանուն դիմելու իրավասություն ունի Ստեփանավան համայնքի ղեկավարը:

3. Շքանշանի պարգևատրումը հաստատվում է Ստեփանավան համայնքի ղեկավարի որոշմամբ:

4. «Ստեփանավանի երախտագիտություն» Պատվո նշանով պարգևատրվում են այն քաղաքացիները, որոնք բացառիկ մեծ վաստակով նպաստել են Ստեփանավանի քաղաքաշինությանը և բարգավաճմանը, ակնառու ներդրում ունեն Ստեփանավանի տնտեսական, մշակութային զարգացման գործում:

5. Ստեփանավան համայնքի ղեկավարը «Ստեփանավանի երախտագիտություն» Պատվո նշանով պարգևատրելու վերաբերյալ միջնորդությամբ դիմում է սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց առաջարկությունների հիման վրա:

6. Շքանշանի նկարագրությունը և նմուշը, դրա շնորհագրի նմուշը հաստատում է Ստեփանավան համայնքի ավագանին:

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի
Ստեփանավան համայնքի ավագանու
2024թ. նոյեմբերի 29-ի N
126-Ա որոշման

# ՆԿԱՐԱԳԻՐ
# «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
# ՊԱՏՎՈ ՆՇԱՆԻ

1. **«Ստեփանավանի երախտագիտություն»** Պատվո նշանը (այսուհետև՝ շքանշան) բաղկացած է երկու տարրից՝ ժապավենից և շքանշանից, որն ունի սկավառակի տեսք, շրջափակված է ութակողմ բազմանկյունաձև երիզներով: Սկավառակի կենտրոնում պատկերված է Ստեփանավան քաղաքի զինանշանը:

2. Ժապավենը, որից կախվում է շքանշանը, մետաքսյա գործվածքից է, երկտակ, լայնքը՝ 50 մմ: Այն ունի Հայաստանի Հանրապետության պետական դրոշի եռագույն շերտավորումը:

3. Շքանշանի տրամագիծը 70 մմ է: Այն պատրաստված է ոսկուց: Շքանշանի միջնամասում է գտնվում Ստեփանավանի զինանշանը:
4. Շքանշանի միջնամասում տեղադրված են 2,5 մմ տրամագծի ցիրկոնիում քարի հատիկներ:
5. Շրջագիծը, ութաթ աստղը անփայլ են, իսկ Ստեփանավան քաղաքի զինանշանը՝ փայլեցված:

6. Շքանշանը դարձերեսի կենտրոնական մասում ունի հատուկ ամրակ՝ Հայաստանի Հանրապետության պետական դրոշը խորհրդանշող ժապավենին ամրանալու համար:

7. Շքանշանի հակառակ երեսին փորագրված է «Ստեփանավանի երախտագիտություն» և Պատվո նշանի ասպետի անունը և ազգանունը, պարգևատրման հերթական համարը:

Հավելված 3
ՀՀ Լոռու մարզի
Ստեփանավան համայնքի ավագանու
2024թ. նոյեմբերի 29-ի N
126-Ա որոշման



Հավելված 4
ՀՀ Լոռու մարզի
Ստեփանավան համայնքի ավագանու
2024թ. նոյեմբերի 29-ի N
126-Ա որոշման

# ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՇՆՈՐՀԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Ստեփանավան համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի -ի որոշմամբ

________________________________

Շնորհված է

**«ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»**
**Պատվո նշանի ասպետ**
**կոչում**

Ստեփանավան համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյան
(կնիք)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«29» նոյեմբերի 2024 թվականի N 127-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 26-րդ ենթակետով Ստեփանավան համայնքի ավագանին. ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը՝ համաձայն հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Ասրյան Վարսիկ | | |
| Հակոբյան Արծրուն | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Հակոբյան Վանո | | |
| Մարտիրոսյան Մարտուն | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Տոնոյան Անդրանիկ | | |
| Գագինյան Ատոմ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի
Ստեփանավան համայնքի ավագանու
2024թ. նոյեմբերի 29-ի N
127-Ա որոշման

# Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին (հետագայում՝ քաղաքացիներ) «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը:

2. «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչումը պատվավոր կոչում է՝ նախատեսված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 26-րդ կետով և 35-րդ հոդվածի 20-րդ կետով:

3. «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին որոշումը կայացնում է Ստեփանավանի համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի առաջարկությամբ:

4. «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչմանը կարող են արժանանալ, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, գույքային և այլ դրությունից, այն քաղաքացիները, որոնք իրենց երկարամյա անբասիր աշխատանքով և (կամ) բացառիկ մեծ վաստակով նպաստել են Ստեփանավանի քաղաքաշինությանը և բարգավաճմանը, ակնառու ներդրում ունեն Ստեփանավանի տնտեսական, մշակութային զարգացման, Ստեփանավանի և այլ քաղաքների միջև բարեկամական հարաբերությունների հաստատման գործում, իրենց կյանքում ու անցած ուղով անուրանալի ավանդ ունեն մշակույթի, արվեստի, գրականության կամ գիտության զարգացման բնագավառում:

5. «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու գրավոր առաջարկով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, Ստեփանավան քաղաքի հասարակության լայն զանգվածները և մշակութային, կրթական, գիտական կազմակերպությունները, որոնք պարտավոր են հիմնավորել իրենց առաջարկը, համակողմանիորեն լուսաբանել «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործունեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսանկարը:

6. Ստացված առաջարկությունները ներկայացվում են Ստեփանավան համայնքի ղեկավարին:

7. «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչմանը ներկայացվող անձի համաձայնությունը պարտադիր է:

8. Ստեփանավանի պատվավոր քաղաքացուն հանդիսավոր պայմաններում հանձնվում է «Ստեփանավանի պատվավոր քաղաքացու» կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը և հավաստագիրը:

9. «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու հավաստագիրը ստորագրում և կնքում է Ստեփանավան համայնքի ղեկավարը:

10. Ստեփանավանի պատվավոր քաղաքացու անունը գրանցվում է Ստեփանավանի համայնքապետարանում պահվող Ստեփանավանի պատվավոր քաղաքացիների հաշվառման հատուկ գրքում (ձևը կցվում է ):

11. Ստեփանավանի պատվավոր քաղաքացուն հանձնվող հավաստագրի ձևը հաստատում է Ստեփանավան համայնքի ղեկավարը (ձևը կցվում է ):

12. «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին Ստեփանավան համայնքի ավագանու որոշումը և Ստեփանավանի պատվավոր քաղաքացու կյանքը և գործունեությունը պարտադիր լուսաբանվում է զանգվածային լրատվության միջոցներով, իսկ համապատասխան նյութերը (համայնքի ավագանու որոշումը և այլ նյութեր) անժամկետ պահպանության են հանձնվում Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմին:

13. «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը կորցնելու դեպքում դրա կրկնօրինակը «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» ճանաչված անձանց հանձնում է Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

14. «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչումը շնորհվում է անձին միայն կենդանության օրոք:

15. «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին որոշումը ընդունվում է Ստեփանավանի ավագանու անդամների առնվազն 2/3-ը կողմ քվեարկելու դեպքում:

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի
Ստեփանավան համայնքի ավագանու
2024թ. նոյեմբերի 29-ի N
127-Ա որոշման

ՁԵՎ

Ստեփանավանի պատվավոր քաղաքացիների հաշվառման գրքի

| Հ/հ | Ստեփանավանի պատվավոր քաղաքացի ճանաչված անձի անունը, ազգանունը, հայրանունը | Ստեփանավանի պատվավոր քաղաքացու կոչում ստանալու ամսաթիվը, ամիսը, թիվը | Համայնքի ավագանու որոշման ամսաթիվը, ամիսը, թիվը | Նշումներ |
|---|---|---|---|---|
| | | | | |

Հավելված 3
ՀՀ Լոռու մարզի
Ստեփանավան համայնքի ավագանու
2024թ. նոյեմբերի 29-ի N
127-Ա որոշման

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Տրվում է քաղ. ________________________________ ին առ այն, որ նրան Ստեփանավանի ավագանու 20__թվ. թիվ ________ որոշմամբ շնորհվել է «Ստեփանավանի պատվավոր քաղաքացի» կոչումը:

Ստեփանավան համայնքի ղեկավար Ա.Հ.Ա.

« » ________________ 20 թ.

ք. Ստեփանավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» նոյեմբերի 2024 թվականի N 128-Ա

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՈՒՐԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ «ՉՔՆԱՂ-1» ՓՀԷԿ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասով և ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում և Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրում 05.11.2024թ. տեղի ունեցած հանրային լսումներն ու քննարկումները և հաշվի առնելով Ստեփանավան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ստեփանավան համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքի և Ուրասար բնակավայրի վարչական տարածքում «Ստեփձոր-1» ՍՊԸ-ի կողմից «Չքնաղ-1» ՓՀԷԿ կառուցելու նպատակով աշխատանքեր իրականացնելու համար:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Ասրյան Վարսիկ | | |
| Հակոբյան Արծրուն | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| | | Հակոբյան Վանո |
| Մարտիրոսյան Մարտուն | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Տոնոյան Անդրանիկ | | |
| Գագինյան Ատոմ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«29» նոյեմբերի 2024 թվականի N 129-Ա

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով Ստեփանավան համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Ստեփանավան համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր սահմանել 24.12.2024թ. ժամը $14^{30}$ ին:

Համայնքի ավագանիներ.

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|
| Աբրահամյան Հրահատ | | |
| Մարտիրոսյան Հմայակ | | |
| Իսպիրյան Անուշ | | |
| Գրիգորյան Արմեն Փ. | | |
| Բաղդասարյան Անուշ | | |
| Պապյան Լևոն | | |
| Ասրյան Վարսիկ | | |
| Հակոբյան Արծրուն | | |
| Դավթյան Արմեն | | |
| Պապյան Արթուր | | |
| Հակոբյան Վանո | | |
| Մարտիրոսյան Մարտուն | | |
| Կիրակոսյան Ջոն | | |
| Տոնոյան Անդրանիկ | | |
| Գագինյան Ատոմ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**